ՄԱՐՏԻ 3-Ը ՄԱՅՐԵՐԻ ՕՐՆ Է

ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՍՎԵՏԼԱՆԱ

ՅՈԹ ՁԱՎԱԿԻ ՄԱՅՐ ԵՎ ՀԻՆԳ ԹՈՌԱՆ ՏԱՏ ՈՒ ԸՆԴԱՄԵՆԸ...

Հիմա երեւի պատկերացրեցիք պատկառելի հասակում ապրող երջանիկ ամուսինների, որ վայելում են իրենց վարուցանած այգու քաղցրահամ բերքը: Մասամբ, չեք սխալվում: Քանի որ իսկապես, անսահմա՜ն երջանիկ են, քանի որ այժմ արդեն իսկապես վայելում են, բայց ահա տարիքի հարցում, կարծում եմ, սխալվում եք: Որովհետեւ ընտանիքի մայրը, Սվետլանա Զաքարյանը, ընդամենը 42 տարեկան է: Շատ կենսուրախ, հանգիստ ու հմայիչ անձնավորություն...

- Ա՛յ, այս սեղանի շուրջ, որ հավաքվում, 16 հոգի ենք դառնում: Քիչ առաջ թոռնիկներիս էլ ճանապարհեցի,- ուրախ-ուրախ պատմում է Սվետան, երբ ես, անկոչ հյուրս, ժամը 21:00 անց եկել էի հարցազրույցի (պատրաստելու էի մեր երկրում մարտի 3-ին տոնվող Մայրերի օրվա վերաբերյալ նյութը): Իսկ նա, հոգսառատ առօրյայից ընդհանրապես չհոգնած, ամենայն անկեղծությամբ, սիրալիր ու անտրտունջ ընդունել էր ինձ, նորից սեղան գցել ու ասես նոր ամուսնացած ու դեռ նոր մայրացած կնոջ նման պատրաստվել զրույցի: Այնինչ, ամուսնացել էր նա 16 տարեկան հասակում, առաջին անգամ մայրացել 26 տարի առաջ: Որդիներից երկրորդը, դեռ մի քանի ամսեկան լքել էր մեր աշխարհը, ինչպես Սվետան ինքն է ասում, Աստծու մոտ գնացել: Բայց հուսառատ մայրիկը շարունակել էր մեկը մյուսից գեղեցիկ բալիկների լույս աշխարհ բերելու շնորհակալ առաքելությունը: Մայրության բերկրանքն ամեն անգամ նորովի էր զգացել, մինչեւ ամենափոքրիկի, Թբիլիսիի թիվ 104 դպրոցի առաջին դասարանի սան Մարիամիկի ծնունդը: Իսկ ընդամենը 38 տարեկանում Սվետան «արժանացել էր» նոր «կոչման», ասել է թե՝ տատիկ էր դարձել: Հիմա ավագ թոռնիկը Մարիամիկ հորաքույրից փոքր է մեկ տարով: Դժվար է ասել նաեւ, թե երկար կմնա, արդյո՞ք, Մարիամիկը ամենակրտսերի կարգավիճակում...

- Եթե Աստծու կամքն է, նորից կմայրանամ, - հաստատեց Սվետան,- *ամենեւին, որեւէ աղանդի հետեւորդ չեմ, մենք Հայ Կաթողիկե եկեղեցու հավատավոր ենք եւ ես, դեռ հայրական ու այժմ իմ տանը, բարեխիղճ քրիստոնյայի նման ու աստվածաշնչյան պատվիրաններին հավատարիմ եմ մեծացել, ապրում եւ դաստիարակում իմ բալիկներին: Երեխաները գիտեն, եթե հայրիկն ու մայրիկը նույնիսկ իրենց սխալը չեն տեսնում, ապա Բարձրյալն անպայման ականատեսը կդառնա: Շատ անգամ հենց այդ համոզումն է նրանց հեռու պահում սխալ քայլերից: Ավանդապաշտ ենք նաեւ ու ժողովրդական հայտնի ասույթի նման, ես ու ամուսինս պահում ենք մեր օջախը. նա դրսի, ես՝ ներսի պատ դառնալով:*

Սվետան հարս է եկել Հայաստանի Կալինինոյի շրջանից: Հենց սկզբից, ամուսնու՝ Գեւորգի հետ բնակություն հաստատել մայրաքաղաքի արվարձաններից՝ Դամպալո կոչվող թաղամասում, խրճիթի նմանվող շա՜տ փոքրիկ տան մեջ: Ու ընդամենը մեկ տարի ապրել տան մեծերի հետ: Հետո երեխաների խնամքն ամբողջովին ընկել է դեռատի կնոջ փափուկ, բայց իրականում ամուրից էլ ամուր ուսերին: Տնակն, ուր ապրել են, ընդամենը երկու սենյակ է ունեցել, որի յուրաքանչյուր անկյունում մեկ դույլ է եղել դրված՝ կտուրից ծորացող անձրեւաջրի դեմ: Տունը նույնիսկ հիմք չի ունեցել: Աշխատանքին զուգահեռ անասնապահությամբ են զբաղվել, հող մշակել, մրգատու այգուց օգտվել: Այդպես ապրել են մինչեւ հինգերորդ երեխայի ծնունդը: Մինչեւ, հավանաբար արժանիի հատուցումը, մինչեւ հին տան տեղում այս նորի, հսկայական բակ ունեցող եռահարկ հրաշալի տան դեռեւս ընթացքի մեջ կառուցումը, որի մաքրությունն ու կոկիկությունը միշտ ապահովում է Սվետա անունով ժրաջան մեղուն:

- Մայրանալուց հետո ամեն ինչ մոռանում ես,- ասում է նա,- *առաջնահերթորեն ինքդ քեզ, համենայնդեպս մի քանի տարի դու պատասխանատու ես նրա կյանքի, նրա արարքների համար, ով քո կարիքն ունի: Իսկ ես առանց որեւէ պարտադրանքի հստակ գիտակցում եմ, որ տան տնտեսուհի, կին ու մայր լինելը իմ առավելությունն ու առաքելությունն է: Ինձ համար կնոջ ամենամեծ շնորհը ոչ միայն մայրանալն է, այլեւ ծնելիության այդ գործընթացին հաջորդող մայրական խնամքը, գուրգուրանքը, պատասխանատվությունը:*

Առավոտյան վեցից շուտ է արթնանում: Լինում է այնպես, որ ընդհանրապես չի քնում. մեկը բանակ պիտի գնա, մյուսը՝ դպրոց, երրորդն՝ աշխատանքի, չորրորդը՝ ուսումնարան, հինգերորդը դեռ նոր պիտի քնից արթնանա... Պետք է բոլորին ճանապարհել, տեղավորել, կերակրել, տունը կարգի բերել, ճաշ եփել, թեկուզ հյուր ընդունել... երբեք չի տրտնջում, ասում է դա բացասաբար է ազդում տան մթնոլորտի վրա, եւ որի պատճառով տունը հաստատ կռիվ է ընկնում: Ոչ էլ զլանում է, ասում է, երեւի կոփվել եմ:

- Հետո, գիտե՞ս,- շարունակեց նա, *- ամեն մի երեխա իր հետ մեկ այլ տիպի ուրախություն է բերում, օգնում մյուսին պահել: Չնայած, ես չեմ պարտադրում, միաժամանակ ուրախանում եմ, որ փոքրին խնամելու ցանկությամբ են լցվում: Երբ մտերիմներս հարցնում են, թե ո՞նց եմ, պատասխանս նույնն է՝ բոլորից էլ լա՛վ: Հետո, ինքնաբերաբար այդպես էլ ստացվում է: Ես շնորհակալ եմ Աստծուն իմ զավակների համար,-* հուզմունքը համակեց նրան: *- Նրանց գոյությունը, առողջ կեցվածքը, գուրգուրանքն ու հոգատարությունը իմ, հայրիկի հանդեպ, նրանց ազնիվ ու կարգապահ մարդ լիելու ցանկությունը, իմ ամենամեծ նվաճումն են, ամենախոսուն երջանկությունս:*

Ես լսում էի Սվետային ու մոռացած լրագրողիս հարցերը, պարզապես դասեր քաղում՝ որպես կին, որպես մայր, որպես հարս, մի կնոջից, ում բարձրագույն կրթությունը՝ կյանքն էր, մասնագիտությունը՝ Մայրություն: Ես միայն առողջություն մաղթեցի նրան, որպեսզի երկա՜ր ու երջանի՜կ ապրեր իր իսկ նախընտրած եւ ոչ թե պարտադրված կյանքը: Շնորհավոր տոնդ, Սվետա, շնորհավոր բոլոր մայրերի տոնը, եւ մասնավորապես նրանց, ով այս պահին ընթերցում է մեզ:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՍԽԵՄԱ

Վրաստանի կառավարությունը հաստատել է պետական հանձնաժողովի կողմից հռչակված ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ պաշտոնական առաջադիմության նոր սխեման:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, ներկայացնելով ուսուցիչների մասնագիտական զարգացման նոր սխեման, նշեց, որ այն նախատեսում է ուսուցիչների բազմակողմանի նախապատրաստություն: Սխեմայում արտացոլվել է համալսարանական ծրագիրը, որն ուղղված է մասնագիտական որակավորման բարձրացմանն ու պաշտոնավարման առաջընթացին:

«Սխեմայի հիման վրա մշակվել է ուսուցիչների մասնագիտական նախապատրաստման բարձրագույն կրթության ծրագիրը: Մինչ օրս, գոյություն չուներ մանկավարժների նախապատրաստման եւ գնահատման հետեւողական միասնական համակարգ: Իսկ նոր համակարգը շահագրգռում է երիտասարդներին ոչ միայն մանկավարժությամբ զբաղվել, այլեւ ծառայում է մանկավարժի հեղինակության բարձրացմանը: Պետությունը պատրաստ է ֆինանսական որոշակի ռեսուրսներ ներդնել մանկավարժների նոր կադրերի նախապատրաստման գործում»,- հայտարարեց կրթության նախարարը:

Սխեմայի շրջանակներում բավականին գործառույթներ են փոխանցվում դպրոցներին, ինչը արտահայտվելու է կրթօջախների ինքնավարության մակարդակի բարձրացման մեջ:

Թամար Սանիկիձեի խոսքերով, հաշվի առնելով սխեմայի մասշտաբայնությունը, 2015-2016 թվականներին այն կկիրարկվի պիլոտային պայմանակարգով: Թեպետ այդ ընթացքում ուսուցիչների ձեռքբերումները կպահպանվեն, եւ դրանք ազդեցություն կգործեն նրանց պաշտոնական առաջադիմության վրա:

Նախարարի հավաստմամբ, նոր սխեմայի ներդնումը հնարավորություն կտա բարձրացնել կրթօջախներում դասավանդման մակարդակը, երկիրը կստանա առավել նախապատրաստված մանկավարժական կադրեր:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՐԹՕՋԱԽ

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ ՔԱՂԱՔԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ 150-ԱՄՅԱ ԴՊՐՈՑԸ

2014-2015 ուսումնական տարին կրկնակի հոբելյանական է մեր մայր դպրոցի՝ Նինոծմինդայի թիվ 1 հայկական կրթօջախի համար: Լրանում է հիմնադրման 150 եւ միջնակարգ որակավորման 80-ամյակը:

Հոբելյանական տարվա ընթացքում նախատեսված տոնական միջոցառումների հարուստ շարքը մեկնարկեց: Դպրոցի անգլերենի ուսուցչուհիներ Գոհար եւ Լաուրա Վարդանյանների նախաձեռնությամբ անցկացվեց բովանդակալից միջոցառում: Ներկա էին դպրոցի մանկավարժներ, շրջանավարտներ, ծնողներ, վետերաններ, աշակերտներ:

Վրաստանի օրհներգի հնչյունների ներքո՝ դպրոցի ձոներգով ազդարարվեց միջոցառման մեկնարկը: Ռուբեն Վարդանյանը հանգամանորեն ներկայացրեց կրթօջախի հիմնադրման պատմությունը, որը սկսվում է 1865 թվականից, երբ ներկայիս Սուրբ Սարգիս եկեղեցու տեղում՝ փայտաշեն եկեղեցուն կից գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ մեկ ուսուցիչ, 11 աշակերտ: Նրա բազայի վրա էլ 1922 թվականին ստեղծվել է Խոջաբեկի տարրական, իսկ 1930-ից՝ ութամյա դպրոցը: 1935-ից դարձել է միջնակարգ՝ առաջինը տարածաշրջանում: 1936-37 ուսումնական տարում Խոջաբեկի հայկական միջնակարգ դպրոցը թողարկել է առաջին շրջանավարտներին: 1938 թվականից շահագործման է հանձնվել ներկայիս երկհարկանի շենքը՝ շրջկենտրոնում, ուր տեղափոխվել է Խոջաբեկի միջնակարգը եւ վերանվանվել Բոգդանովկայի (այժմյան Նինոծմինդայի) հայկական միջնակարգ դպրոց: 40-ականների կեսերից մինչեւ 1965 թվականը դպրոցն ունեցել է ռուսական բաժին, որի հիման վրա էլ ստեղծվել է Նինոծմինդայի ներկայիս ռուսական միջնակարգ դպրոցը:

150-ամյա դպրոցը տվել է ավելի քան 4 հազար շրջանավարտ՝ 90 ոսկե եւ արծաթե մեդալակիրներով: Մոտ 1000-ը ստացել են բարձրագույն կրթություն, եղել են գիտությունների դոկտորներ եւ թեկնածուներ:

Դպրոցի ամբողջ պատմության ընթացքում ուսումնադաստիարակչական աշխատանքներով զբաղվել են 11 տնօրեն, 16 փոխտնօրեն, շուրջ 400 ուսուցիչներ... Ներկայումս դպրոցում աշխատում է 50 մանկավարժ, սովորում՝ 351 աշակերտ, որոնցից 38-ը՝ առաջին դասարանում: Դպրոցն ունի նաեւ Կենաց ծառ՝ 150 տերեւներով, որոնց վրա գրված են նրա պատմությունը կերտած վաստակաշատ մանկավարժների անունները, եւ կան տերեւներ, որոնց վրա դեռ գրվելու են նվիրյալների անուններ...

Բեմում իրար էին հաջորդում 8-րդ դասարանի (դասղեկ՝ Օֆելյա Ղարսլյան) սաների՝ Սյուզաննա Էլոյանի, Անի Սանոսյանի, Ռուբեն Սարգսյանի, Վարազդատ Դարբինյանի եւ մյուսների ելույթները հայերեն, վրացերեն, անգլերեն լեզուներով: Այս ամենին զուգահեռ ցուցադրվեցին դպրոցի կյանքին նվիրված հետաքրքիր ու հիշարժան լուսանկարչական ու տեսաձայնագրային դրվագներ՝ հյուսված վաստակած հանգստի անցած մանկավարժներ Բուրաստան Հանեսյանի, Ռոզա Բայրամյանի, Հայաստան Խոդիկյանի, Զոյա Աբելյանի հուշերից: Միջոցառումն ավարտվեց դպրոցի տնօրեն Տիգրան Պողոսյանի ելույթով.

- Շնորհավորում եմ մեր բոլոր ժամանակների սաներին եւ ուսուցիչներին: Մենք հիրավի հպարտանալու մեծ առիթ ունենք՝ մեր դպրոցով եւ նրա հարուստ պատմությունով,- ասաց նա՝ հորդորելով աշակերտներին լավ սովորել եւ է՛լ ավելի բարձրացնել դպրոցի հեղինակությունը:

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ք.Նինոծմինդա

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ðà¶º´²ÜàôÂÚàôÜ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՔՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՕԳՆԱԿԱՆ



Դժվարությամբ եմ կարողանում առաջին դասարանցի երեխայիս ստիպել, որ զբաղվի դասերով: Պարապելիս էլ ուշադրությունը այլ կողմի վրա է շեղում, կարդացածը մոռանում է: Ինչպե՞ս վարվել:

Վ.Վարդանյան

Ախալքալաքի

Դուք փորձեք ուղղակի կանոնավորել երեխայի քունը: Հիշեք, կանոնավոր քունը երեխաներին անհրաժեշտ է նոր նյութը լավագույնս մտապահելու համար: Եվրոպացի գիտնականները, որոնք Proceedings of the National Academy of Sciences հանդեսում հրապարակել են իրենց անցկացրած հետազոտության արդյունքները, եկել են այն եզրակացության, որ երեխաները նոր տեղեկատվությունն անհամեմատ ավելի լավ են մտապահում, եթե լավ են քնում:

Հետազոտությանը մասնակցել են 6-ից մինչեւ 12 ամսական 216 փոքրիկներ: Գիտափորձի շրջանակներում գիտնականները զարգացնող տարբեր խաղերի օգնությամբ դիտարկել են, թե փոքրիկներն ինչպես են մտապահում նոր տեղեկատվությունը:

Պարզվել է, որ այն փոքրիկները, ովքեր խաղերից անմիջապես հետո պառկում էին քնելու, հիշում էին այն իրերի գրեթե կեսը, որոնք նրանց ցույց էին տալիս: Իսկ այն փոքրիկները, ովքեր չէին քնում չորսժամյա խաղային շրջանի ընթացքում, ոչինչ չէին հիշում:

Ըստ գիտնականների, արդյունքներն ապացուցում են քնից առաջ ընթերցանության անհրաժեշտությունը, ինչպես նաեւ բացատրում են, թե ինչու են փոքրիկները վաղ հասակում այդքան երկար քնում:

¸Æº Î²

ՇՆՉԵՔ ԵՎ ՆԻՀԱՐԵՔ

Շատ է հուզում ավելորդ քաշի հիմնախնդիրը: Շատ դիետաներ փորձեցի, ամեն ինչ ապարդյուն էր: Չգիտեմ՝ ի՞նչ անել:

Հ.Սարգսյան

Թբիլիսի

Իսկ փորձե՞լ եք ճիշտ շնչել: Ոչ: Նկատի ունեցեք՝ հաճախ ավելորդ քաշը նման է այն աղբին, որը ժամանակին դուրս չի տարվել եւ չի այրվել: Իսկ թթվածինն այն միակ վառելիքն է, որով այրվում են լիպիդները կամ ճարպերը: Ճիշտ շնչելու համար փորձեք կատարել մի յուրատեսակ վարժություն, որը կոչվում է «Գիրք»:

Պառկեք մեջքի վրա (մակերեսը պետք է հարթ լինի, շատ հարմար է հատակին պառկելը): Ստամոքսի վրա, արեւային հանգույցից մի փոքր ներքեւ, որեւէ գիրք դրեք:

Քթով խոր ներշնչեք եւ բերանով արտաշնչեք: Եթե գիրքը մնում է նույն տեղում, ուրեմն վարժությունը ճիշտ չեք կատարում: Ձեր առջեւ դրված խնդիրն այն է, որ արագ արտաշնչելիս՝ գիրքը «վեր ցատկի» ու թռչի հատակին: Ոչ թե սողա կամ սահի, այլ հենց թռչի: Դրան հասնելու համար ստամոքսը պետք է կրծքավանդակից նշանակալիորեն ավելի վեր բարձրանա:

Հիշեք. ձեր գլխավոր խնդիրը ոչ թե գիրքը թռցնելն է, այլ ճիշտ շնչել սովորելը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Անգինայի դեպքում.- Գոլ ջրով բաժակի մեջ 1 թարմ ձու գցել, հարել, կոկորդը դրանով ողողել օրվա մեջ 5-6 անգամ:

Ականջացավի դեպքում.- Երկու կտոր սոխ վերցրեք, փաթաթեք բամբակով եւ դրեք ականջի մեջ: Ցավն իսկույն կհանդարտվի, իսկ հետո կմաքրվի նաեւ քթաբմպանը:

Այս միջոցը շատ լավ օգնում է նաեւ երեխաներին:

Հայմորիտի դեպքում.- Մեկական գդալ եղեսպակի եւ ուրցի վրա եռացրած ջուր լցրեք, ամանը փաթաթեք սրբիչով, քթի համար ճեղք թողեք եւ գոլորշու վրա շնչեք 10-15 րոպե: Այդպես շարունակեք՝ 1 շաբաթ: Կանխարգելման համար կարող եք գործողությունը կատարել ուշ աշնանը՝ ցրտերն ընկնելիս, եւ ձմռան կեսին:

Սրտացավի դեպքում.- Մասուրի թուրմ պատրաստեք. մասուրի 1 բաժակ պտուղները 10 րոպե եռացրեք 2 բաժակ ջրում եւ թրմեք ողջ գիշեր: Առավոտյան քամեք եւ ավելացրեք 1 ճաշի գդալ մեղր: Ընդունեք 2-3 շաբաթ, օրվա մեջ երեք անգամ՝ կեսական բաժակ, ուտելուց կես ժամ առաջ: Հետո երկու շաբաթ ընդմիջեք եւ կուրսը կրկնեք:

Մեկ լիտր եռացրած ջրի մեջ լցրեք 2 ճաշի գդալ ալոճենու չոր պտուղները եւ 20 րոպե եռացրեք: Այնուհետեւ ավելացրեք սառը ջրում լվացած մասուրի 1 բաժակ պտուղներ եւ եռացրեք եւս 10 րոպե: Կրակից վերցրեք եւ զով տեղում մեկ օր թրմեք: Թուրմը քամեք եւ պահեք սառնարանում: Ընդունեք գոլ վիճակում 2-ական ճաշի գդալ՝ օրվա մեջ 3 անգամ, ուտելուց կես ժամ առաջ:

14 օր խմել, հետո 10 օր ընդմիջել, այնուհետեւ 14-օրյա կուրսը կրկնել:

Ստենոկարդիայի նոպան հանելու համար 20-30 գ կոնյակ խմել՝ շաքարի հետ միասին: Ճնշող ցավը կանցնի:

ԲՆԱԿԱՆՈՆ

ՁԵՐ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԸ

Լավ է, երբ կենսաբանական ժամացույցը հետ է ընկնում սենյակի ժամացույցից: Գիտնականները կարծում են, որ մարդու տարիքի մասին չի կարելի դատողություններ անել՝ հիմնվելով միայն նրա ապրած տարիների, այսինքն անձնագրային տվյալների վրա: Այդ, այսպես կոչված, օրացույցային տարիքից շատ ավելի կարեւոր է կենսաբանական տարիքը: Այն չափվում է մեկ այլ ժամացույցով, որը գտնվում է մեր ներսում: Իսկ այդ ժամացույցը մեկի մոտ արագ է աշխատում, մյուսի մոտ՝ դանդաղ:

Ավաղ, ծերանալն անխուսափելի է: Եվ դա սկսվում է արդեն օրացույցային 20-25 տարիների շրջանում, երբ հիմնական հորմոնները սկսում են ավելի քիչ արտադրվել: 40-ին մոտ մարդու արտաքին տեսքը նկատելիորեն փոխվում է: Իսկ հետո արդեն հայտնվում են բնութագրական հիվանդությունները՝ աթերոսկլերոզ, օստեոպորոզ, արտրոզ, քրոնիկական վարակներ: Իհարկե լավ է, երբ ծերությունն ուշանում է: Նորմալ է, երբ այն ժամանակին է վրա հասնում: Բայց վատ է, երբ այն վաղ է վրա հասնում: Չէ՞ որ դրանից են կախված կյանքի հետագա տեւողությունը, որակը եւ կենսաբանական տարիքը:

Այն, որ կենսաբանական տարիքը կարող է չհամապատասխանել օրացույցայինին, գիտնականները գլխի են ընկել դեռեւս նախորդ դարում, սակայն միայն վերջերս են սկսել փորձել հաշվել այն: Եվ պարզվել է, որ օրգանիզմը ծերանում է հատված առ հատված, չնայած այն հանգամանքին, որ այն մի միասնական ամբողջություն է: Օրինակ, 55 տարեկան մարդու պարամետրերը, որը կանոնավորապես զբաղվում է սպորտով, սեռական կյանք է վարում, հետեւում է սննդակարգին եւ, գլխավորը, սթրեսների չի ենթարկվում, կարող են համընկնել կենսաբանական այն ցուցիչներին, որոնք բնորոշ են օրացույցային 35 տարեկան համապատասխանող տարիքին: Եվ հակառակը. 35-ամյա երիտասարդ մարդը, որը խմում է, ծխում եւ իր առողջության վրա ընդհանրապես խաչ է քաշել, կարող է արագընթաց կերպով ծերանալ: Նրա ապրած մեկ տարին կարող է երկուսի կամ երեքի հավասար լինել:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ

2014-Ը ԱՄԵՆԱՏԱՔՆ ԷՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դիտարկումների ողջ պատմության ընթացքում ամենատաքը եղել է 2014 թվականը: Այդ մասին հաղորդել է Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպությունը (ՀՕԿ), նշելով, որ անցյալ տարի պահպանվել է կլիմայի տաքանալու միտումը:

Ընդհանրացնելով եղանակի դիտարկման աշխարհի առաջատար կենտրոնների տվյալները՝ ՀՕԿ-ի Ժնեւի կենտրոնակայանը եկել է այն եզրակացության, որ 2014 թվականին ցամաքում եւ օվի մակերեւույթին գլոբալ ջերմաստիճանն ըստ Ցելսիուսի 0,57 աստիճանով բարձր է եղել 1961-1990 թվականն ընկած ժամանակաշրջանում գրանցված միջին ցուցանիշից, որը կազմել է 14 աստիճան: Դրա հետ մեկտեղ, ինչպես ընդգծում են մասնագետները, 2014 թվականի եւ մյուս ամենատաք տարիների արդյունքների տարբերությունը կազմում է ընդամենը մի քանի հարյուրերորդական աստիճան: Օրինակ, 2005 թվականին ջերմաստիճանը 0,54 աստիճանով է բարձր եղել միջին ցուցանիշից, իսկ 2010-ին՝ 0,55 աստիճանով:

«Տաքացման ընդհանուր միտումի պահպանումը ավելի կարեւոր գործոն է, քան որեւէ առանձին տարվա վարկանիշը»,- հայտարարել է ՀՕԿ-ի գլխավոր քարտուղար Միշել Ժարոն: Տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ 2014 թվականը «ամենատաքն էր դիտարկումների պատմության ընթացքում, բայց, ընդսմին, մյուս երեք ամենատաք տարիների համեմատությամբ տարբերությունը խիստ աննշան է», պարզաբանել է նա:

Ինչպես նշում է ՏԱՍՍ-ը, ՀՕԿ-ում գլոբալ տաքացման շարունակում է սպասվում, քանի որ մթնոլորտում մեծանում է ջերմոցային գազերի կուտակումը եւ աճում է օվկիանոսների ջերմաստիճանը: «15 ամենատաք տարիներից 14-ը բաժին են ընկնում ընթացիկ հարյուրամյակին: Մենք սպասում ենք, որ գլոբալ տաքացումը կշարունակվի»,- հավելել է Ժարոն:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ով եղբոր նկատմամբ ոխ ունի, դաշնակից է սատանային, ով կասկածով է քնում, բարկացնում է Աստծուն:

ԵՂՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ
(380-470)
Հայ մատենագիր, փիլիսոփա

Սերը չքնաղ, խորհրդավոր, իր էությամբ անհաս է միշտ:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(12-13 դդ.)
Վրաց բանաստեղծ

Ստախոսը ստում է նաեւ այն ժամանակ, երբ դրա համար առիթ չունի, միմիայն սովորության ուժով:

ՍԵՆԵԿԱ ԿՐՏՍԵՐ
(մ.թ.ա. 4-րդ դար)
Հին հույն փիլիսոփա

Մեծ գործեր ստեղծելու համար հարկավոր է ապրել այնպես, կարծես թե չես մեռնելու:

ՎՈՎԵՆԱՐԳ
(1715-1747)
Ֆրանսիացի փիլիսոփա

Իմաստալից է միայն հանուն ուրիշների ապրած կյանքը:

Ա.ԷՅՆՇՏԵՅՆ
(1879-1955)
Գերմանացի տեսաբան, ֆիզիկոս

Մարդը ոչ թե մեծանում է այն ժամանակ, երբ դադարում է լսել մայրիկին, այլ այն ժամանակ, երբ հասկանում է, որ մայրիկը ճիշտ էր ասում:

Ա.Ղազարյան
«Վրաստանի» ընթերցող

²ØàôêÜàôÂÚàôÜÆð ²è²æ °Ì ÐºÎà



Ամուսնությունից առաջ՝
Տղամարդը - Փա՜ռք Աստծո, արժանացա:
Կինը - Գուցե գնա՞մ:

Տղամարդը - Ի՞նչ ես ասում, այդ մասին անգամ չմտածես:
Կինը - Սիրո՞ւմ ես:
Տղամարդը - Իհարկե:
Կինը - Երբեւէ կդավաճանե՞ս ինձ:
Տղամարդը - Ինչ հիմարություն:
Կինը - Ինձ կհամբուրե՞ս:
Տղամարդ - Անպայման:
Կինը - Ձեռքերիդ ազատություն կտա՞ս:
Տղամարդը - Երբեք:
Կինը - Կարո՞ղ եմ քեզ վստահել:
Ամուսնությունից հետո՝
Կարդա ներքեւից՝ վերեւ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՔՆՆԱՐԿԵՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահությամբ, փետրվարի 24-26-ը գումարվել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ ընդլայնված կազմով:

Ժողովին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներն անդրադարձել են ապրիլի 22-24-ը Հայաստանում եւ Մայր Աթոռում կազմակերպվելիք Սրբադասման արարողությանը եւ ոգեկոչման միջոցառումներին: Քննարկվել են ապրիլի 22-ի Հսկման արարողության, ապրիլի 23-ի Սբ. Պատարագի եւ Սրբադասման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր, տեղեկություններ են փոխանցվել սրբապատկերի եւ մասնատուփի պատրաստման, շարականի կանոնի բազմաձայնման գործընթացի մասին, ինչպես նաեւ հիշատակի այլ արարողություններին Հայ եկեղեցու մասնակցության վերաբերյալ:

Նշվեց, որ ապրիլի 22-24-ի արարողություններին կմասնակցեն 38 եկեղեցիների, միջեկեղեցական եւ էկումենիկ կառույցների ու միջկրոնական կազմակերպությունների շուրջ 70 ներկայացուցիչներ, որոնց թվում դավանակից չորս եկեղեցիների եւ երեք Ուղղափառ եկեղեցիների պետեր, էկումենիկ կառույցների ութ նախագահներ եւ գլխավոր քարտուղարներ, Ուղղափառ, Կաթոլիկ, Անգլիկան եւ Բողոքական եկեղեցիների պատվիրակություններ, եկեղեցականներ Ռուանդայից եւ Դարֆուրից: Արարողություններին կմասնակցեն նաեւ ներկայացուցիչներ աշխարհասփյուռ բոլոր հայոց թեմերից:

Գոհունակություն հայտնելով կատարված աշխատանքների համար՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը հանձնարարել է նույն նախանձախնդրությամբ շարունակել նախատեսվող արարողությունների պատշաճ կազմակերպումը:

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 0,4-2 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Կենտրոնական բանկը Հայաստանի տնտեսական աճը 2015թ. գնահատում է 0,4-2 տոկոս միջակայքում՝ պայմանավորված արտահանելի հատվածի աշխուժացմամբ:

ԿԲ «Գնաճի հաշվետվության» համաձայն՝ կանխատեսվող հորիզոնում տնտեսական աճը աստիճանաբար կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին՝ պայմանավորվելով մասնավոր սպառման աճի տեմպերի արագացմամբ եւ մասնավոր ներդրումների դանդաղ տեմպերով վերականգնմամբ:

Կենտրոնական բանկը հայտնում է, որ 2014թ. չորրորդ եռամսյակում պահպանվել է ներքին ցածր պահանջարկ, որի մասին են վկայում մասնավոր սպառման նվազումն ու ներդրումային թույլ ակտիվության պահպանումը՝ հիմնականում պայմանավորված արտերկրից եւ հատկապես ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումների զգալի կրճատմամբ: Արդյունքում գնահատվում է, որ 2014թ., նախորդ տարվա համեմատ, մասնավոր սպառմանն ուղղված ծախսերը կմնան անփոփոխ, իսկ մասնավոր ներդրումները կնվազեն 0,6 տոկոս:

Առաջարկի տեսանկյունից տնտեսական աճի դանդաղումը այս եռամսյակում եւս պայմանավորվել է արդյունաբերության ճյուղի ու ծառայությունների, մասնավորապես՝ առեւտրի ոլորտի թողարկման ծավալների ցածր աճով եւ շինարարության ճյուղում շարունակվող բացասական զարգացումներով: Ի տարբերություն նշված ճյուղերի, գյուղատնտեսության ճյուղի զարգացումը եղել է կանխատեսվածին համահունչ: Արդյունքում ակնկալվում է, որ 2014 թվականին տնտեսական աճը գտնվել է 3,2-3,5 տոկոսի շրջանակում:

ԶՈՐԱԿՈՉՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԱԾՆԵՐԸ ԿԱԶԱՏՎԵՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԻՑ

Հայաստանի կառավարության որոշմամբ զինվորական ծառայություն չանցած եւ 27 տարին լրացած անձինք կազատվեն քրեական հետապնդումից եւ կվճարեն միայն տուգանք: Այդ նպատակով կառավարությունը կատարեց օրենսդրական փոփոխություն:

Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց, որ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափած ու 27 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, խուսափելով քրեական հետապնդումից, չեն վերադառնում Հայրենիք: «Այդ քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու նպատակով արդեն հերթական անգամ օրենսդրական փոփոխություն է կատարվում, որն էլ մեծ խթան է հանդիսանում հազարավոր երիտասարդների վերադարձը Հայրենիք ապահովելու գործում»,- ասաց Հրանուշ Հակոբյանը:

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետի երկարաձգումը 2013 թվականի դեկտեմբերի 1-ից մինչ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը հնարավորություն է տալիս 27 տարին լրացած, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիներին սահմանված ժամկետում մուծել համապատասխան վճարը, վերադառնալ Հայրենիք եւ ազատվել քրեական հետապնդումից:

ՊԵՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄ՝ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը հրաման է ստորագրել «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման եւ անցկացման» ընթացակարգը հաստատելու վերաբերյալ:

Հայաստանի ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների (ներառյալ 2015/2016 ուստարվա) պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների մասնակցելու նպատակով, 2015թ. մարտի 10-ից մինչեւ ապրիլի 15-ը (ներառյալ) Հայաստանի կրթության եւ գիտության նախարարությունում կազմակերպվում է դիմորդների փաստաթղթերի ընդունելություն:

Դիմողները դիմում-հայտի հետ միասին պետք է ներկայացնեն ավարտական փաստաթղթի (դիպլոմի) բնօրինակը՝ պատճենի հետ միասին, ներդիրի (միջուկի) բնօրինակը՝ պատճենի հետ միասին, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, զինգրքույկ, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը՝ պատճենի հետ միասին եւ 2 լուսանկար (3Х4սմ չափսի):

Ըստ մասնագիտությունների (մասնագիտացումների) ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվելու են 2015թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում:

Փաստաթղթերն ընդունվելու են Հայաստանի կրթության եւ գիտության նախարարությունում 2015թ. մարտի 10-ից մինչեւ ապրիլի 15-ը:

ԵԶԴԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ-ԻՆ ԴԻՄԵԼ Է ԻՐԵՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ

Փետրվարի 25-ին Հայաստանի ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը հանդիպում ունեցավ Հայաստանում եզդիական համայնքի մի շարք անդամների հետ:



Հանդիպման առանցքում եղել է տարբեր ազգերի նկատմամբ իրականացված ոճրագործությունների դատապարտման վերաբերյալ հարցը:

Էդուարդ Շարմազանովը մեկ անգամ եւս դատապարտեց Հյուսիսային Իրաքում եզդի ժողովրդի նկատմամբ ամիսներ առաջ իրականացված զանգվածային բռնությունները, նկատելով, որ այդ մասին ՄԱԿ-ի բարձր ամբիոնից խոսել եւ տեղի ունեցած բռնությունները դատապարտել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Եզդիական համայնքի անդամներն իրենց հերթին բարձր են գնահատել երկրի նախագահի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում:

Քննարկման ընթացքում համաձայնություն է կայացվել Հայաստանի Ազգային ժողովում առաջիկայում կազմակերպել լուսանկարների ցուցադրություն, որը կներկայացնի Հյուսիսային Իրաքում եզդի ժողովրդի նկատմամբ իրականացված զանգվածային բռնությունները: Բացի այդ՝ կստեղծվի աշխատանքային խումբ, որը կզբաղվի եզդիների նկատմամբ տարբեր ժամանակներում իրականացված բռնությունների եւ պատմական փաստերի ուսումնասիրությամբ:

ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի խոսքով՝ 2015 թվականից սկսվում է ցեղասպանությունների դատապարտման նոր փուլ:

ԿՍՏԵՂԾՎԻ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստանի կառավարության որոշմամբ Հայաստանի վարչապետի գլխավորությամբ կստեղծվի կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, որի նպատակը կոռուպցիոն ռազմավարության, դրա հիման վրա մշակված տարբեր ծրագրերի, միջոցառումների քննարկումն ու անցկացումն է:

Խորհրդի կազմում ընդգրկվելու են նաեւ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորներ, ինչի համար Կառավարությունը նամակով դիմելու է Ազգ նախագահին, իսկ վերջինս էլ նամակով դիմելու է խմբակցություններին՝ անդամ առաջարկելու համար:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԳՆԱԾԱՄԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՎԵՑ

Հայաստանի Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց «Հայաստանի Հանրապետությունում առաջացած կառավարման ճգնաժամի մասին» Ազ հայտարարության նախագիծը: Նախագծին կողմ քվեարկեց 16, դեմ՝ 67, ձեռնպահ՝ 6 պատգամավոր:

Քվեարկությանը չի մասնակցել ԲՀԿ խմբակցությունը, որը շարունակում է բոյկոտել Ազ քառօրյան:

ՆԱՐԱ ՇԼԵՊՉՅԱՆԸ՝ 80 ՏԱՐԵԿԱՆ

Փետրվարի 23-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել հեռուստահաղորդավար, Հայաստանի ժողովրդական արտիստ Նարա Շլեպչյանի հետ՝ շնորհավորել նրան ծննդյան 80-րդ տարեդարձի առթիվ: Հայաստանի նախագահը նաեւ շնորհավորական ուղերձ է հղել Նարա Շլեպչյանին:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ՝ «ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ»

Հռոմի Ֆրանցիսկոս պապը «Եկեղեցու ուսուցիչ» կոչում է շնորհել հայ միջնադարյան հոգեւորական, աստվածաբան, բանաստեղծ եւ փիլիսոփա Գրիգոր Նարեկացուն: «Այս մասին տեղեկացնում է Vatican Radio-ն: Մինչ Մեծ պահքի համար Արիկա քաղաք մեկնելը՝ Հռոմի պապը Վատիկանի Սրբերի միաբանության ղեկավար, կարդինալ Անգելո Ամատոնիի հետ հանդիպման ժամանակ հաստատել է տասներորդ դարի հայ սրբին համընդհանուր եկեղեցու տիտղոս շնորհելու առաջարկությունը:

2016-Ը՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը առաջարկում է 2016 թվականը Հայաստանում հայտարարել Գրականության տարի: «Գալիք տարին Հայաստանում հայտարարելով Գրականության տարի՝ հնարավորություն կստեղծենք մեր դասական եւ ժամանակակից գրողների աշխատանքները ավելի լայն ներկայացնելու հանրությանը տարբեր լեզուներով, ընդարձակել գրահրատարակչական ծրագրերը, ինչպես նաեւ իրականացնել գրական այլ տիպի միջոցառումներ»,- նշեց Էդվարդ Միլիտոնյանը: Նա նշեց նաեւ, որ այն կօգնի ընդարձակել ընթերցանության դաշտը, կրկին անդրադառնալ գրադարանների եւ այլ մշակութային հաստատությունների վիճակի բարելավմանը, որպեսզի մարդիկ ավելի շատ կարողանան կարդալ, ցանկություն ունենան հանդիպելու գրողներին, եւ հեռուստատեսային եւ ռադիոդաշտը միտված լինի ավելի շատ անդրադառնալու արդի գրողների աշխատանքներին:

ԴՈԼԱՐՆ ՈՒ ԵՎՐՈՆ ԷԺԱՆԱՑԵԼ ԵՆ

Հայաստանի Կենտրոնական բանկի հրապարակած փոխարժեքների համաձայն՝ փետրվարի 19-ին ԱՄՆ դոլարի փոխարժեքը նվազել է 0.32 դրամով՝ կազմելով 479.16 դրամ: Եվրոյի փոխարժեքը նվազել է 0.18 դրամով եւ կազմել 545.95 դրամ: ՌԴ ռուբլու փոխարժեքն աճել է 0.07 դրամով՝ կազմելով 7.74 դրամ: Բրիտանական ֆունտի փոխարժեքը աճել է 0.32 դրամով եւ կազմել 740.35 դրամ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ

01.03.2015. Անառակի կիրակի

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ապաշխարության եւ պահքի մի գեղեցիկ շրջան է սահմանել հավատացյալների համար, որի կիրակիներից յուրաքանչյուրն իր անվանումն ունի Աստվածաշնչի որեւէ պատմությանը համապատասխան: Մեծ Պահքի երրորդ կիրակին կոչվում է Անառակի, ըստ Ղուկասի Ավետարանում հիշատակվող անառակ որդու մասին պատմող առակի:

07.03.2015. Սրբոցն Երուսաղեմի Հովհան Հայրապետի, հայոց Հովհաննես Օձնեցի Հայրապետի, Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի վարդապետների հիշատակության օր

Սեծ Պահքի երրորդ շաբաթ օրը Հայաստանյայց Առաքելական եկեղեցին տոնում է Հայ եկեղեցու նշանավոր աստվածաբան-եկեղեցականների՝ Հովհան Օձնեցի Հայրապետի, Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի վարդապետների հիշատակության օրը:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ

ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ԵՆ ՀՈՂՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ

Վրաստանում սկսվել է 20 մեգավատտ հզորությամբ «Քարթլի» հողմակայանի շինարարության առաջին փուլը:

«Քարթլին» առաջին հողմաէլեկտրակայանն է Վրաստանում, որը պետությունը կառուցում է սեփական միջոցներով, եւ որի ներդրումային արժեքը կազմում է 30 միլիոն ամերիկյան դոլար: Էներգետիկայի փոխնախարար Իլյա Էլոշվիլու հայտարարության համաձայն՝ կառուցմանը կնախորդի երկու փուլ. տուրբինների գնումը եւ տեղափոխումը, իսկ այնուհետեւ՝ դրանց մոնտաժումը:

«Կարելի է ասել, որ մենք անցել ենք շինարարության փուլին, ներդրողները շատ մեծ հետաքրքրություն են դրսեւորում այս նախագծի նկատմամբ, բայց մենք սկզբունքորեն որոշել ենք ավարտին հասցնել նախագիծը եւ հանձնել շահագործման: Միայն դրանից հետո կվաճառվի այդ կայանը: Ես կարծում եմ, որ եթե Վրաստան մտնեն լավ ներդրողներ՝ շահագրգռված այս ոլորտով, կարելի կլինի յուրացնել 300-350 մեգավատտ քամու էներգիա»,- նշել է Էլոշվիլին:

ՖՈՒՏԲՈԼ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԺ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Ո՞Ր ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՆ ԵՆ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը:

Վրաստանի հավաքականը, ինչպես նախորդ աղյուսակում, 126-րդ տեղումն է, իսկ ինչ վերաբերում է Հայաստանի ազգային ընտրանուն, ապա այն առաջադիմելով 5 հորիզոնականով, հանգրվանել է 74-րդ տեղում: Նախկին ԽՍՀՄ երկրներից լավագույնը Ուկրաինան է (27), հաջորդում է Ռուսաստանը (33), Ուզբեկստանը 71-րդն է: Ամենաբարձր առաջադիմությունը գրանցվել է Իրանի հավաքականի համար: Այն առաջադիմել է 10 հորիզոնականով եւ հիմա աղյուսակում 41-րդն է: Հինգ հորիզոնականով առաջադիմել է նաեւ Ադրբեջանի թիմը (131-րդ տեղը), Թուրքիան զբաղեցնում է 52-րդ հորիզոնականը:

Վարկանիշային աղյուսակի առաջատարների շարքում փոփոխություն չկա: Աշխարհի չեմպիոն Գերմանիայի հավաքականը զբաղեցնում է առաջին հորիզոնականը, իսկ լավագույն տասնյակում ընդգրկվել են նաեւ Արգենտինայի, Կոլումբիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Ուրուգվայի եւ Իսպանիայի հավաքականները:

ՍՏԵՓԱՆՇՄԻՆԴԱ - ԼԱՐՍԻ

ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է

Ստեփանծմինդա-Լարսի ավտոճանապարհը փետրվարի 23-ից երկկողմանի բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար՝ անվաշղթաների կիրառման դեպքում: Այս մասին հայտնում են Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտից:

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

ԶԱԶԱ ՈՒՐՈՒՇԱԶԵ. «ՕՍԿԱՐԻՆ» ՀԱՎԱԿՆՈՐԴ ՀԻՆԳ ՖԻԼՄԵՐԻ ԹՎՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼԸ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ Է»

«ՕՍԿԱՐԸ» ՇՐՋԱՆՑԵՑ ՄԵՐ «ՄԱՆԴԱՐԻՆԻՆ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, վրաց ռեժիսոր Զազա Ուրուշաձեի նկարահանած վրաց-էստոնական «Մանդարին» կինոնկարը հավակնում էր օտար լեզվով նկարահանված ֆիլմերի անվանակարգում, «Օսկարով» պարգեւատրման:

Այդ անվանակարգում գերակայությունը տրվեց լեհ կինոռեժիսոր Պավել Պավլիկովսկու «Իդային»: Կինոփառատոնի գլխավոր պարգեւը, «Տարվա լավագույն կինոնկարի» անվանակարգում հանձնվեց մեքսիկացի կինոռեժիսոր Ալեխանդրո Գանսալես Ինյարուտի «Բրեդմենին»:

Ինչպես նշեց Զազա Ուրուշաձեն, «Օսկարին» հավակնող հինգ ֆիլմերում ընդգրկվելն արդեն իսկ հաջողություն է: «Միակ ֆիլմը, որն ընդունվեց հոտնկայս ծափահարություններով՝ դա «Մանդարինն» էր: Ընդ որում, ծափահարեցին երկու անգամ»,- հայտարարեց Զազա Ուրուշաձեն: Ռեժիսորի խոսքերով, պրոդյուսերական ընկերություններից ֆիլմի հեղինակներին արդեն առաջարկություններ են արվում:

Հիշեցնենք, որ վրաց-էստոնական «Մանդարին» կինոնկարը 2013-2014 թվականներին միջազգային տարբեր կինոփառատոներին արժանացել էր 15 պարգեւի, իսկ ռեժիսորը պարգեւատրվել էր Պատվո շքանշանով:

ՀՈԲԵԼՅԱՆ

ՓՈԼԱԴ ԲՅՈՒԼ ԲՅՈՒԼ ՕՂԼՈՒ ՀՈԲԵԼՅԱՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



Թբիլիսիի Զանսուղ Կախիծեի անվան երաժշտական-մշակութային կենտրոնում անցկացվեց համերգ-երեկո՝ նվիրված ճանաչված երգիչ, երգահան, դերասան Փոլադ Բյուլ Բյուլ օղլու ծննդյան 70-ամյակին:

Հոբելյանական միջոցառման շրջանակներում փետրվարի 20-ին Թբիլիսիում բացվեց Փոլադ Բյուլ Բյուլ օղլու հոր՝ ադրբեջանցի ճանաչված երգիչ Մուրթուզ Մամեդովի կիսանդրին:

Ինչպես նշեց հոբելյարը, Վրաստանն իր երկրորդ հայրենիքն է: «Մայրական տատս վրացուհի է՝ Քեթեւան Վեզերիշվիլին: Նա ծագումով Ախմետայի շրջանից էր, իսկ մայրս՝ Ադելա խանումը ծնվել եւ մեծացել էր Թբիլիսիում, որտեղ եւ ծանոթացել հորս՝ Մուրթուզ Մամեդովի հետ»,- հոբելյանին նշեց Փոլադ Բյուլ Բյուլ օղլին:

Համերգ-երեկոյին, որին մասնակցում էր նաեւ հոբելյանի թոռը՝ 13-ամյա Մուրթուզ Բյուլ Բյուլ օղլին, անցկացվեց Փոլադ Բյուլ Բյուլ օղլուն նվիրված երկլեզու գրքի շնորհանդեսը:

«Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտակցում է Սերգեյ Դարբինյանին, սիրելի եղբոր՝



Ժորա Տիգրանի ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցություն հայտնում հանգուցյալի ընտանիքին եւ հարազատներին:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խոր վշտով հայտնում է, որ կյանքի 90-րդ տարում վախճանվել է կրթօջախի տնօրենի տնտեսական հարցերով նախկին բազմամյա փոխտեղակալ՝



Վելիխան Միսակի ՀԱԿՈԲՅԱՆԸ

եւ ցավակցություն հայտնում հանգուցյալի ընտանիքին եւ հարազատներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Թբիլիսահայ դրամատուրգ Գ.Սունդուկյանի «Պեպո» պիեսի հերոսներին տանջող թուղթը: 6.Սահմանային գետ Ռուսաստանում: 9.Հայկական էպոսի հերոսների ծննդավայր «հայրենիքը»: 10.«...ը լեռներում» խորհրդային ֆիլմ: 12.Երաժշտական հարվածային գործիք: 13.Պահապան, նեցուկ, սատար: 17.Խթան, ազդող: 20.Պայծառ աստղ: 22.Ալկոհոլային խմիչք: 24.«Բարձր»-ի հականիշը: 26.Հրաշքների աշխարհի աղջիկը: 28.Քաղաք Հայաստանում: 30.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված Նար-Դոսի «Ես եւ...» վիպակը: 32. ... ու շիտակ: 35.Կամ, կաս, ...: 36.Վրացուհու անուն: 37.Իրանի բնակիչ: 38.Հայաստանի մայրաքաղաքներից: 39.Լիճ պատմական Հայաստանում: 40.Սիրտ, հոգի չունեցող: 42.Ավտոբուսի, ինքնաթիռի ...: 44.Հոգնակիակերտ մասնիկ հայերենում: 46.Ապրանքի հատկանիշ: 48.Նկարչի ստեղծածը: 50.Հարկ, տուրք: 52. ..., ուզես, ուզի: 54.Ոստիկանի գրածը: 56.Ծխի, փոշու եւ ջրի կուտակում մթնոլորտում: 58.Մեսրոպյան այբուբենի տառ: 59.Քարտեզների հավաքածու: 61. ... Բրաուն: 62.Նաինա ...: 63. ... Լաշեզ (Փարիզ): 64.3, 14-ին համապատասխանող տառը: 65.Պետություն Ասիայում: 66.Արական, տղամարդու անուն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Իվան ...: 3.Ոչ ամուսնացած: 4. ... ու համերաշխ: 5.Սպորտային ֆիրմա: 7.Գործվածքի տեսակ: 8.Շատ ...: 11. ... խաղալիք: 14.Մթերք, սնունդ: 15.Նատաշան մտերմիկ շրջանում: 16.Համադասական շաղկապ: 18.Ֆրանսիացի գրող էմիլ ...: 19.Ցուցական դերանուն: 21.«..., տեսա, հաղթեցի» (Կեսար): 23.Նստվածք, դիրտ: 25.Բազմաթիվ, շատ: 27.Ինքնավար Հանրապետություն Վրաստանում: 28. ... ես ծեր եմ, բայց ոչ զառամյալ: 29.Չափում են վոլտերով: 31.Արձակ ստեղծագործություն: 33.Ինքնաբերաբար, բնազդով: 34.Ազգ Վրաստանում: 41.Կենդանու գլխի հարված: 43.Գեթ, միայն: 45.Զինվորական աստիճան: 47. ... Մարքս: 49.Մազ, վարս: 50.Հայկական կոնյակ: 51.Շաքարի համը: 53.Եվրոպացու եւ հնդկացու խառնուրդը: 55.Հրասայլ: 57.Քաղաք Ռուսաստանում: 60. ... Կլարջեթի: 64.Էդգար Ալան ...:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ցեյտնոտ: 9.Անանեւ: 10.Հողմ: 11.Լիմոնադ: 13.Ամիգո: 16.Բավ: 17.Կեն: 19.Ջեռակ: 22.Ցնցուղ: 24.Տոլեդո: 25.Շոգի: 27.Թելատու: 29.Ջավեշտ: 32.Գրետա: 33.Նիկոլո: 35.Սեյֆ: 38.Մով: 40.Գորկի: 41.Գլակ: 44.Էմին: 47.Ռիո: 48.Մուտի: 50.Ուտելի: 51.Զրո: 52.Եք: 53.Գեղ: 54.Կիա: 55.Ռելս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Դելիբ: 2.Մտքով: 3.Կոհակ: 4.Լամա: 5.Չատի: 6.Շեւրո: 8.Տոդես: 12.Մարց: 14.Մթել: 15.Գրադ: 18.Ծղոտ: 19.Զոկատ: 20.Ռելե: 21.Կոլտ: 23.Ուշակով: 26.Գուգո: 28.Եֆիմ: 29.Զեխ: 30.Վասո: 31.Շեյկ: 34.Կոմիտե: 36.Երկու: 37.Ֆինիքս: 39.Թաի: 42.Լռիկ: 43.Կոզա: 45.Մուգ: 46.Նեղ: 48.Մոռ: 49.Տել:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445